ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2016 թվականի N 88 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև նոր շրջանակային համաձայնագրի առևտրի ու ներդրումների հարցերի շուրջ վարվող բանակցությունների առաջին փուլին մասնակցելու նպատակով պատվիրակության՝ համաձայն հավելվածի, 2016 թվականի փետրվարի 15-18-ը Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման հետ կապված ծախսերը, մասնավորապես, Գարեգին Մելքոնյանինը, Վիգեն Քոչարյանինը, Արթուր Մայսուրյանինը, Արմեն Մելկիկյանինը, Սերգեյ Շահնազարյանինը, Լուսինե Դավթյանինը, Անդրանիկ Խաչիկյանինը, Մանուկ Միքայելյանինը, Խաչատուր Խաչատրյանինը, Ժորա Սարգսյանինը և Տիգրան Հարությունյանինը, կատարել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

2. Ընդունել ի գիտություն, որ Արման Ալոյանի և Գևորգ Նազարյանի՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են

համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Գարեգին Մելքոնյանի՝ Բելգիայի Թագավորություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. փետրվարի 22
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
փետրվարի22 -ի N 88 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-18-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆՈՂ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Գ. Մելքոնյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ (պատվիրակության ղեկավար)
Վ. Քոչարյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Խ. Խաչատրյան	- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ (15.02.2016 թ. - 17.02.2016 թ.)
Ա. Մայսուրյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Եվրամիության և Առևտրի համաշխարհային կազմակերպության վարչության պետ
Ա. Մելկիկյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ
Ս. Շահնազարյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետ (15.02.2016 թ. - 17.02.2016 թ.)
Ժ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի պետ (15.02.2016 թ. - 17.02.2016 թ.)
Տ. Հարությունյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Եվրամիության և Առևտրի համաշխարհային կազմակերպության վարչության Առևտրի համաշխարհային կազմակերպության բաժնի առաջին կարգի մասնագետ
Ա. Ալոյան	- ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության իրավական խորհրդատվության և զարգացման բաժնի պետ (համաձայնությամբ)
Մ. Միքայելյան	- ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի վերահսկողության վարչության պետ (համաձայնությամբ, 16.02.2016 թ. - 18.02.2016 թ.)

Լ. Դավթյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի տեղակալ (15.02.2016 թ. - 17.02.2016 թ.)

Ա. Խաչիկյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության պետի տեղակալ (15.02.2016 թ. - 17.02.2016 թ.)

Գ. Նազարյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի փոխտնօրեն (16.02.2016 թ. - 18.02.2016 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ